Վտանգավոր թափոններ

Կրթական նյութ

Ներածություն

Թափոնը համարվում է վտանգավոր, եթե այն դրսևորում է հետևյալ հատկություններից մեկը՝ դյուրավառություն, կոռոզիա, թունավորում կամ ռեակտիվություն: Այս հատկությունները թափոնը դարձնում են պոտենցիալ վտանգավոր մարդկանց և շրջակա միջավայրի համար: Այս թափոնները կարող են լինել կամ արտադրական գործընթացների կողմնակի արտադրանք (ինչպես CFL-ների նման սարքերում) կամ պարզապես դեն նետված կենցաղային արտադրանքներ, ինչպիսիք են՝ մաքրող հեղուկները կամ թունաքիմիկատները:

Այս թափոնները կարող են հայտնաբերվել տարբեր ֆիզիկական վիճակներում՝ գազային, հեղուկ կամ պինդ: Կարևոր է զգուշորեն վերաբերվել վտանգավոր թափոններին՝ հաշվի առնելով, որ դրանք համարվում են թափոնների առանձին խումբ և դրանցից չպետք է փորձել ազատվել առօրյա կենցաղային թափոնների օրինակով:

Արդյո՞ք մեր տնային տնտեսություններն ունեն վտանգավոր թափոններ: Արդյո՞ք գիտակցում ենք, որ ամենօրյա քիմիական նյութերը, որոնք մենք օգտագործում ենք տնային տնտեսություններում, իրենց բնույթով պոտենցիալ վտանգ են ներկայացնում: Տնային տնտեսություններում օգտագործվող որոշ քիմիական նյութեր իրենց բնույթով վտանգավոր են, կարևոր է բացահայտել դրանք և, հնարավորության դեպքում, գտնել այլընտրանքներ:

Ի՞նչն է դասակարգվում որպես պոտենցիալ վտանգավոր կենցաղային թափոն: Հաշվի առնելով դրանց բազմազան բնույթը՝ դասապլանների հետ տրամադրվող ռեսուրսները կօգնեն բացահայտել դրանցից մի քանիսը: Նախ կարևոր է հասկանալ, թե ո՞ր ապրանքն է համարվում պոտենցիալ վտանգավոր թափոն: Այս դասապլանում տրված ռեսուրսները նաև օգնում են հասկանալ նշանների իմաստն ու մեկնաբանությունը: Սկսելու համար կարևոր է իմանալ, որ ապրանքների վրա վտանգավոր թափոնների նշանները երեքն են (հավելյալ տեղեկությունների համար տե՛ս ռեսուրսների աղյուսակը):

1. Նկարը
2. Ծրջանակը
3. Նախազգուշական (ազդանշան) բառերը պատկերի տակ

ԹՈՒՅՆ

Կտանգավոր կենցաղային թափոնների նպատակը.

- Որոշ վտանգավոր թափոնների խառնուրդները կարող են առաջացնել վնասակար գոլորշիներ, պայթյուններ կամ հրդեհներ:
- Թթուներ պարունակող ապրանքները կարող են այրել մաշկը, աչքերը կամ շնչուղիները:
- Լուծիչների և թունաքիմիկատների ազդեցությունը կարող է առաջացնել սրտխառնոց, գլխացավ, ցնցումներ և այլն:
- Քիմիական նյութերի բազմակի ազդեցությունը կարող է քաղցկեղ առաջացնել, իսկ նորածինների կամ ընտանի կենդանիների մոտ կարող է առաջացնել թունավորման դեպքեր:
- Որոշ վնասատուներին ոչնչացնելիս՝ թունաքիմիկատները կարող են վնասել նաև շրջակա միջավայրը այդ թվում՝ օգտակար միջատներին, օրինակ թիթեռներին:

Այսպիսով, կենցաղային վտանգավոր թափոնների նվազեցումը պարտադիր է:

- Եղե՛ք խելամիտ և գնե՛ք միայն անհրաժեշտ ապրանքներ:
- Ուշադի՛ր նայեք ապրանքի պիտակներին և նախապատվությունը տվեք էկոլոգիապես ավելի մաքուր տարբերակներին:
- Հետևե՛ք անվտանգության բոլոր ցուցումներին՝ արտադրանքն ընտրելիս, և ամենայն պատասխանատվությամբ վերաբերվել դրա վերացմանը:
- Հնարավորության դեպքում օգտագործեք այլընտրանքային ոչ թունավոր տնային արտադրանք: